Բազրեցեալ յամի Տեառն 316, և **տպագրեցեալ** ի թուի Տեառն 1690, ի ԲԱԴՎԱ» հրամանաւ Մեծաւորաց (con licenza de'Superiori): Այս գիրքը, — որ առանց նօտր տառի՝ լեցուն է սխալներով, — 84ՐԴ էջին սկսեալ կը պարունակէ «Հաւատով խոստովանիմ»ը, (մեն մի էջի հանդիպակաց՝ իտալերէնն ալ), նաեւ Պապականներու յատուկ քանի մը աղօթք ու պատկեր: — Հայերէն **միա՛կ** գիրքն է ասիկա՝ դրոշմուած համալսարանական այս ոստանին մէջ. թէեւ Հ. Գափիանեանի ցուցակը «Պարտէզ» մըն ալ արձանագրած ունի միեւնոյն տարին:

ԳԼՈՒԽ Բ.

1567ԷՆ սկսեալ

ԹՈՒՐՔԻԱ

մինչեւ **1912**

ԿԱՊԱՏԱԴՊԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՍՏԱՆՊՈԼ, ՂԱԼԱԹԻԱ, ԲԵՐԱ, ՕՐԹԱՔԵՈՅ, ՍԿԻՒՏԱՐ, ՀԱՍՔԵՈՅ

Բիւզանդական Կայսրութեան կործանումէն՝ շուրջ 2 դար յառաջագոյն, Կ. Պոլսոյ մէջ գոյութիւն ունէր արդէն հայ գաղութ մը, որ մեծ մասամբ բաղկացած էր Կաֆայեցի (Թէֆիկցի) առեւտրականներէ: Այդ գաղութը Թրքահայոց **առաջին** Պատրիարք Յովակիմ Սրբազանէն (1461 - 1478) սկսեալ մինչեւ **78**ՐԴ՝ Յովհաննէս Արքեպսկ. Արշարունի (1911), ամած ու ստուարացած է դարերու ընթացքին՝ Փոքր Ասիայէն մայրաքաղաքս պանդխտելով այլ եւս հոս հաստատուող և սերունդներ շարունակուող Հայերով որոնք գիտցած են պահել իրենց հաւատքը, լեզուն ու գրականութիւնը: Օժտուած ձեռներէց ոգիով, Պոլսահայը հանդիսացած է քաղաքակրթիչ տարր մը՝ իր շուրջի զանազան ազգարնակչութեանց մէջ, ընծայելով Ազգին ու Կառավարութեան՝ այլ եւայլ ասպարէզներու պատկանող ուշիմ անհատներ, — եկեղեցական, վարժապետ, գրագէտ, վաճառական, Պետական պաշտօնեայ, արուեստագէտ և արհեստաւոր: — Անիկա իր հաւատքը կրցաւ պահել հոս՝ Եկեղեցիով, իր լեզուն՝ Դպրոցներով, իսկ իր գրականութիւնը՝ **Տպարան**ներով, որոնք հին ատենները՝ կը գտնուէին մեր Պատրիարքաց իրաւասութեան և հովանաւորութեան ներքեւ: — Այդ տպարաններուն բոլորած գործունէութիւնը մեր հետազօտութեան նիւթ ընելէ առաջ, տեսնենք թէ ի՛նչ վիճակ ունէր հին Ստանպօլը 15ՐԴ դարուն՝ տպարանական տեսակէտով: — Արքայանիստ այս ոստանին մէջ մինչեւ հիմայ լոյս տեսած հայկեվար և հայատառ տաճկեվար գիրքերէ կը տեղեկանանք թէ **Կոստանդնուպոլսոյ** հոմանիշ են **Բուզանդիա, Բիւզանդիոն, Ասիրանէ, Տէր-Սա՛ռատէր** և **Տէր-Այլիէ:**

* * Պուքրէշ քաղաքը 1906 ին ռումաներէն գիրք մը հրատարակած է գրաշար-տպագրիչ մը George Ionescu անուն: Այդ գիրքին անունն է ԱՌԱՋՆՈՐԴ ՏՊԱԳՐԻՉԻ (Calauza Tipografului): Հեղինակը Տպագրութեան արուեստին ծագումն ու զանազան երկիրներ հաստատութեան պատմականը համառօտակի շարունակելով կը հասնի Տաճկաստանի, որուն (էջ 67) ամբողջական բարգմանութիւնն է հետեւեալը՝ զոր կը պարտինք ռումանագէտ Տ. Ղեւոնդ Փափազեանի, Թուլչայի հայ քահանային. — «Կրօնական յեղաշրջիմ ժամանակներու մէջ, Սուլթաններու Կայսրութեան Կ. Պոլիս քաղաքը **1483** ին առաջին անգամ երեւան կու գայ տպագրական մամուլը՝ «Սուլթան Պայազիտ Բ.ի օրերուն, ձեռամբ բարրի Կերսոնի (Հրեայ), որդի Մովսէսի և թոռ՝